

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ
ՄԱՐԶ	ՎԱՅՈՑ ՁՈՐ



### 1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

2017 թվականի հունիսի 19-ին «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին Ազգային ժողովի որոշման հիմքով Վայոց Ձորի մարզում (այժմ բնակավայրեր) Վարդահովիտ, Հերմոն, Գողթանիկ, Եղեգիս, Արտաբույնք, Հորբատեղ, Շատին, Հորս, Սալլի, Թառաթումբ, Քարագլուխ, Աղնջաձոր, Սևաժայռ, Կալասար, Գետիկվանք և Արատես թվով 16 գյուղերի միավորումից կազմավորվեց Եղեգիս խոշորացված համայնքը, որն ընդգրկում է 479,634 ք/կմ տարածք: Համայնքում բնակվում են 6431 բնակիչներ: Նորակազմ, խոշորացված համայնքի կենտրոնը Շատին բնակավայրն է:

Եղեգիս համայնքը հանդիսանալով պատմական Վայոց Ձոր գավառի մի մասը, հայտնի է իր պատմական անցյալով, հանրահայտ Եղեգիս քաղաքով, որը գտնվել է ներկայիս Շատին, Արտաբույնք և Եղեգիս բնակավայրերի միջև: Եղեգիս համայնքում ընդգրկված բնակավայրերն առանձնապես ծաղկուն շրջան ապրեցին 12-14-րդ դարերում: Արտաբույնք և Եղեգիս բնակավայրերի միջև գտնվող բլուրի վրա կառուցված հանրահայտ «Սմբատաբերդ» ամրոցը դարձավ Օրբելյան իշխանների ռազմաքաղաքական, վարչական, տնտեսական զարգացման կենտրոն, որը կապված էր եղել Մետաքսե ճանապարհի հետ: «Սմբատաբերդ» ամրոցի պաշտպանության, կենտրոնացված իշխանական հովանավորության շնորհիվ հսկայական թափով զարգացան արվեստները, ճարտարապետությունը, կառուցվեցին նոր ճանապարհներ: Շատին բնակավայրի վարչական տարածքում գտնվող հոչակավոր «Շատիվանք» եկեղեցիական-պատմաճարտարապետական-պատմամշակույթային համալիրը դարձավ հայ մտքի, գիր ու գրականության, մշակույթի զարգացման կենտրոն /դարերից եկած գրույցների համաձայն և դարերով փոխանցված հիշողությամբ «Գլաձոր» համալսարանը գտնվել է «Շատիվանքում»/: 12-13-րդ դարերում Եղեգիս քաղաքում կազմավորվեց հրեական համայնք, որը միակն էր Հայաստանի տարածքում, որի վառ ապացույցն է Եղեգիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող հրեական գերեզմանոցը: Վարդենանց լեռնանցքում կառուցվեց «Սելիմի» քարավանատունը: Կառուցվեցին բազմաթիվ եկեղեցիներ, սրբավայրեր, մասնավորապես Սալլի բնակավայրի վարչական տարածքում գտնվող Սուրբ Մամասի խոնարհված սրբատուն-վանքը, խաչքարեր, որոնք իրենց վրա կրում են իմ, քո, բոլորիս նախնիների հիշատակը, հավատը Աստծուն և այնքան կարոտ են մեր ինկարկում-այցելություններին:

1604 թվականին տարածքն ամայացավ, երբ պարսից Շահ Աբասն պատերազմ էր մղում օսմանյան Թուրքիայի դեմ և համայնքի բնակավայրերը հարկադրաբար գաղթեցին Պարսկաստան՝ թողնելով հրկիզված բնակավայրերը թուրքերին:

1827-1828թ.թ. ռուս-պարսկական պատերազմում Ռուսաստանի հաղթանակի շնորհիվ 1828 թվականին ռուսական բանակի հետ հազարավոր հայեր Պարսկաստանից և Արևելյան Թուրքիայից ներգաղթեցին և շենացրին ներկայիս Եղեգիս համայնքի բնակավայրերը:

## 2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Եղեգիս համայնքը ծովի մակարդակից բարձր է 1640-1690 մ, այն ունի գեղեցիկ դիրք: Համայնքի տարածքով են հոսում Եղեգիս և Աղնջաձոր գետակները, որոնք համարվում են Արփա գետի վտակները: Եղեգիս համայնքով է անցնում, Հերմոն-Ելփին՝ ռոռզման ջրագիծը, որի շնորհիվ հնարավոր է ռոռզելի դարձնել համայնքի շուրջ 300

հեկտար տարածք: Համայնքի տարածքում կան հանքային հանածոներ՝ շինարարական քար՝ գրանիտ, տրավերտին: Կլիման մերձարևադարձային է, ձմեռը՝ ցուրտ, ամառը՝ շոգ: Իր բնական, աշխարհագրական դիրքով, պատմական ժառանգությամբ Եղեգիս համայնքը Հայաստանի ամենահարուստ համայնքն է և ունի զբոսաշրջության, ձիարշավի, էկոտուրիզմի, լեռնային հեծանվավազքի, վրանային ճամբարների, ձմեռային սպորտաձևերի համար լավագույն պայմաններ և հնարավորություններ:

**3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	630
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (°C)	-8
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (°C)	29

**4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից 1.1) 1.2) 1.3)	<ul style="list-style-type: none"> <li>• Քարազլուխ -9կմ</li> <li>• Աղնջաձոր – 11կմ</li> <li>• Թառաթումբ – 12կմ</li> <li>• Սալլի- 6կմ</li> <li>• Հորս -8կմ</li> <li>• Շատին-0 կմ</li> <li>• Արտաբույնք- 4կմ</li> <li>• Հորբատեղ- 9կմ</li> <li>• Եղեգիս -4կմ</li> <li>• Հերմոն -13կմ</li> <li>• Գողթանիկ- 16կմ</li> <li>• Վարդահովիտ -23կմ</li> </ul>
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Եղեգնաձորի շրջան
3. Համայնքի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	127կմ
3.2) մարզկենտրոնից (կմ)	12կմ
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	0կմ
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	12կմ
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	10կմ
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	Չկա
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1680մ

5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	479,634կմ <sup>2</sup>	47963,4հա
6. Սահմանակից համայնքների անվանումները	Գլաձոր, Արենի, Արցախի հանրապետություն	
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	shatin.vayotsdzor@mta.gov.am	
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	Yeghegis.am	
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	+37493355759	
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	99282	
11. Համայնքի հեռախոսային կոդը	0281	
12. Համանրում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	Այո	
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	3611	
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո	
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	Ոչ	

**5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	6431
2. Գրանցված ծնունդների քանակը	91
2. Մահացության դեպքերի քանակը	37
3. Ամուսնությունների քանակը	23
4. Ամուսնալուծությունների քանակը	1
5. Տնային տնտեսությունների թիվը	2158
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	176
7. Կենսաթոշակառուների քանակը	878
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	441

**6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	2018թ.
1. Գրադարանների քանակը	11
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	0
5. Հանրակրթական դպրոցների քանակը	12
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

**7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ**

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ <sup>2</sup> )	220714,7
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	25
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	1893

**8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	47663,46
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	42471,45
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	47663,46
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	4097
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	2264
7. Խոզերի գլուխաքանակը	379
8. Գյուղատնտեսական տեխնիկա	18
8.1 տրակտորներ (քանակը)	18
8.2 կոմբայններ (քանակը)	0
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	2045

**9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ**

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	32
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Ոչ
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Ոչ
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	Այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	300
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	57
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	42
6.2 Էքսկավատորների քանակը	12
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	3
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 քանակը	0
6.6 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	30

8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	Ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	Ոչ

**10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**  
*Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)*

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը եկամուտներ		
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝		
2.1 հողի հարկ		
2.2 գույքահարկ		
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը		
3.1 դոտացիա		
3.2 սուբվենցիա		
4. Մուտքեր հողի օտարումից		

*Համայնքի վարչական բյուջեի ծախսեր (հազ. դրամ)*

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր		

*Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները (հազ. դրամ)*

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ		

*Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)*

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր		

**11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ**

1. Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝	
1.1 համայնքային ծառայողներ	
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	
3. Ավագանու անդամների թվաքանակը	

**12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
-------------	--------------------

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Ոռոգման համակարգի բարելավում	Ոռոգման խողովակաշարերի կառուցում
Խմելու ջրի հիմնախնդիրների կարգավորում	ՕԿՁ-ների և ջրագծերի կառուցում և վերանորոգում
Մանկապարտեզի վերանորոգում	Համայնքի և պետության միջոցով վերանորոգում
Գյուղտեխնիկայի ձեռքբերումը	Սոցիալական ներդրումների հիմադրամի և համայնքի համաֆինանսավորմամբ գյուղտեխնիկայի ձեռքբերում
Գյուղատնտեսության զարգացումը	Գյուղատնտեսության ձարգացման տարբեր ծրագրերի տեղայնացում
Գյուղմթերքների վերամշակումը և արտահանումը	Տարբեր կազմակերպությունների հետ համագործակցություն
Արտագաղթի կրճատումը	Նոր աշխատատեղերի ստեղծման խթանում: